ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ 1970 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Երկրորդ աշխարհամարտն ու Հայրենական Մեծ պատերազմը նոր իրողությունների առաջ կանգնեցրեց ԽՍՀՄ-ում բնակվող ժողովուրդներին, այդ թվում՝ հայությանը: Նախապատերազմյան՝ 1939 թ. մարդահամարի տվյալներով՝ ԽՍՀՄ հայ բնակչությունը կազմում էր 2.152.860 մարդ (ԽՍՀՄ ամբողջ բնակչության 1,26%-ը): Այս ցուցանիշը ԽՍՀՄ էթնիկ խմբերի մեջ թվաքանակով 10-րդն էր: Վերոհիշյալ մարդահամարի տվյալներով՝ Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր 1.061.997 հայ կամ ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության ընդամենը 49,33%-ը, իսկ մյուս միութենական հանրապետություններում միասին՝ 1.090.863 հայ կամ 50,67%-ը[1]:

Տարբեր հաշվարկներով Մեծ Հայրենականին ԽՍՀՄ-ից մասնակցած շուրջ 500.000 հայերից մոտ 200.000-ը ներկայացնում էին միութենական հանրապետությունները, 300.000-ը՝ Հայկական ԽՍՀ-ն[2]:

Հայության վիթխարի ներդրումը Մեծ Հայրենականում, մարդկային կորուստները (շուրջ 200.000), սովը, համաճարակները, զանգվածային աքսորը Ղրիմից և Հյուսիսային Կովկասից դեպի Միջին Ասիա, Ալթայ, Սիբիր, նկատելի փոփոխություններ

---

[1] Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Երևան, 2011, էջ 94:

[2] Տե՛ս Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной войне (1941–1945), Ереван, 2010, էջ 45:

մտցրեցին միութենական հանրապետությունների և առանձին երկրամասերի հայության թվաքանակի ու տեղաբաշխման մեջ:

Պատերազմի հետևանքները ԽՍՀՄ-ի համար այնքան ծանր էին (ժողովրդագրական պատկերի բարդ իրավիճակ, սով, ավերված տնտեսություն և այլն), որ թույլ չտվեցին հերթական մարդահամարն անցկացնել 1949 թվականին՝ նախորդ մարդահամարից տաս տարի անց:

Հետպատերազմյան պռաջին Համամիութենական մարդահամարն անցկացվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1958 թ. մայիսի 5-ի թիվ 480 որոշման համաձայն:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները կարևոր նշանակություն ունեին, քանի որ առաջինն էին հետպատերազմյան շրջանում և բնակչության թվաքանակի վերաբերյալ նոր տվյալներ արձանագրեցին[3]:

Մարդահամարի անցկացումը 1959 թ. պայմանավորված էր ոչ միայն տնտեսական և կազմակերպական խնդիրներով, որոնք առկա էին հետպատերազմյան տարիներին, այլ նաև նպատակ էին հետապնդում թաքցնել, ի ցույց չդնել պատերազմում այն հսկայական մարդկային կորուստները, որը կարող էր արձանագրել մարդահամարը: Ակնհայտ է, որ, ելնելով նախորդ մարդահամարների քաղաքական նշանակության փորձից, նոր մարդահամարի արդյունքները դժվար թե կարելի լիներ օգտագործել քարոզչական նպատակներով, ուստիև Ստալինը մերժել էր մարդահամարի անցկացումը 1949 թվականին:

Մարդկային հսկայական կորուստներից, սեռատարիքային կազմի փոփոխություններից բացի, նկատելի փոփոխություններ էին կրել նաև ԽՍՀՄ սահմանները: Ուկրաինական ԽՍՀ-ին էին միացվել Արևմտյան Ուկրաինան և Անդրկարպատյան Ուկ-

---

[3] Տե՛ս http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8

ռաինան, Բելոռուսական ԽՍՀ-ին՝ Արևմտյան Բելոռուսիան: Դեռևս 1940 թ. ԽՍՀՄ կազմի մեջ էին մտցվել մերձբալթյան հանրապետությունները՝ կազմավորելով Լիտվական, Լատվիական և Էստոնական ԽՍՀ-ները: Նույն թվականին կազմավորվել էր նաև Մոլդովական ԽՍՀ-ն: Նոր մարդահամարն անհրաժեշտ էր նաև այլ գործընթացներ վեր հանելու տեսակետից:

Այս համատեքստում կարևոր էր նաև բնակչության տեղաբաշխման շրջանների փոփոխության իրողությունը, նոր տարածքների շարունակական յուրացումը Ղազախստանում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում: Բացի այդ՝ հետպատերազմյան տարիներին փոփոխվեց ԽՍՀՄ քաղաքաբնակ և գյուղաբնակ բնակչության թվային հարաբերակցությունը, որը հիմնականում հետպատերազմյան շրջանում ավելի քան 1500 նոր քաղաքային բնակավայրերի և քաղաքատիպ ավանների կազմակերպման արդյունք էր:

1959 թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 2.786.912 մարդ[4], որից միայն Հայկական ԽՍՀ-ում՝ 1.551.610 մարդ կամ 55,7%-ը: Հայկական ԽՍՀ-ից հետո հայ բնակչությունը մեծ թիվ էր կազմում Վրացական ԽՍՀ-ում (442.916 մարդ[5]), Ադրբեջանական ԽՍՀ-ում (442.089 մարդ), ՌՍԴԽՀ-ում (255.978 մարդ) և Ուզբեկական ԽՍՀ-ում (27.370 մարդ):

1959 թ. մարդահամարով առաջին անգամ հայ ազգաբնակչության քանակի վերաբերյալ թվական տվյալներ են առկա մերձբալթյան հանրապետությունների առումով (Լիտվայում, Լատվիայում և Էստոնիայում միասին՝ 2.179 հայ):

---

[4] Տե՛ս http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8.

[5] Տե՛ս Минасян М., Этнические меньшинства Грузии; потенциал интеграции на примере армянского населения страны, Ереван, 2006, էջ 10:

Հաջորդ Համամիութենական մարդահամարն անցկացվեց 1970 թ. և միտված էր ապահովելու ԽՍՀՄ «զարգացած սոցիալիզմի» փուլի ժողովրդագրական, տնտեսական, կրթական և այլ ասպարեզների զարգացման վիճակագրական պատկերը:

1970 թ. մարդահամարն արձանագրել է ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ ամբողջական պատկեր[6].

Հայության թվաքանակը, տեղաբաշխումն ու տոկոսային կշիռը միութենական հանրապետություններում ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի:

	Թվաքանակը	ամբողջը %-ով
ԽՍՀՄ, որից՝	3.559.151	100
1. Հայկական ԽՍՀ	2.208.327	62.0
2. Ադրբեջանական ԽՍՀ	483.520	13.6
3. Վրացական ԽՍՀ	452.309	12.7
4. ՌՍԴԽՀ	298.718	8.4
5. Ուզբեկական ԽՍՀ	34.174	1.0
6. Ուկրաինական ԽՍՀ	33.439	0.9
7. Թուրքմենական ԽՍՀ	23.054	0.6
8. Ղազախական ԽՍՀ	12.814	0.4
9. Տաջիկական ԽՍՀ	3.787	0.1
10. Կիրգիզական ԽՍՀ	2.688	0.1
11. Բելոռուսական ԽՍՀ	2.362	0.07
12. Լատվիական ԽՍՀ	1.511	0.04
13. Մոլդովական ԽՍՀ	1.336	0.04
14. Էստոնական ԽՍՀ	604	0.02
15. Լիտվական ԽՍՀ	508	0.01

[6] Տե՛ս "Итоги Всесоюзной переписи населения 1970 года", том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов. Статистика, Москва, 1973, էջ 324:

Այդուսակից ակնհայտ երևում է, որ ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակը նախորդ մարդահամարի թվական տվյալների հետ համեմատած զգալի աճ էր արձանագրել (772.239 մարդ), ընդ որում ոչ միայն բնական աճի, այլ նաև արտասահմանից սփյուռքահայ զանգվածների դեպի Հայկական ԽՍՀ շարունակվող ներգաղթի արդյունքնում: 1970 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Հայկական ԽՍՀ-ից դուրս բնակվում էր ԽՍՀՄ հայության ընդամենը 38%-ը:

1970 թ. ԽՍՀՄ տարածքում Հայկական ԽՍՀ-ից հետո հայ բնակչության թվաքանակով երկրորդն Ադրբեջանական ԽՍՀ-ն էր: Ադրբեջանական ԽՍՀ հայ բնակչությունը նախորդ մարդահամարի համամատ աճել էր ավելի քան 40.000 մարդով, մինչդեռ Վրացական ԽՍՀ հայությունը, նույն ժամանակահատվածում աճել էր ընդամենը 9.393-ով: Հետպատերազմյան տարիներին՝ 1959–1979 թթ., Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի աճի տեմպերի դանդաղումը պայմանավորված էր վրացականացման քաղաքականությամբ, հանրապետությունից հայության, ինչպես նաև ռուսների և հրեաների արտահոսքով[7]: Ադրբեջանական ԽՍՀ-ից նույնպես, մասնավորապես ԼՂԻՄ-ից և Նախիջևանի ԻԽՍՀ-ից, տեղի էր ունենում հայ բնակչության արտահոսք, որը երկրամասերը դանդաղ հայաթափելու քաղաքականության արդյունք էր: Միութենական այլ հանրապետություններում, այդ թվում՝ Հայկական ԽՍՀ-ում, հայ ազգաբնակչության թվաքանակը զգալի աճ էր արձանգրել:

1970 թ. ՌՍԴԽՀ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 298.718 մարդ կամ ԽՍՀՄ հայության 8,4%-ը: Նախորդ մարդահամարի համեմատ՝ գրանցվել էր հայության թվաքանակի աճ 42.740 մարդով կամ 16,7%-ով:

---

[7] Տե՛ս Suny R. G., The making of the Georgian nation, Stanford, 1988, էջ 299:

ՈՍԴԽՀ ամբողջ հայության 33%-ը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում (98.589 հայ), շուրջ 18%-ը՝ Ռոստովի մարզում: Այս երկու վարչական միավորների հայությունը միասին կազմում ՈՍԴԽՀ հայության կեսից ավելին: Հատկանշական է, որ հյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում առկա էր ստվար հայ բնակչություն, ընդ որում ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային շրջաններում: Այսպես, օրինակ, Կովկասյան Հանքային Ջրերի (Մինեռալնիե Վոդի) ագլոմերացիային բնորոշ էր քաղաքաբնակ հայության բարձր տոկոսային կշիռը[8]:

Մոսկվայում էր կենտրոնացած ՈՍԴԽՀ հայության 8,5%-ը կամ 25.584 մարդ, որը նույնպես զգալիորեն բարձր ցուցանիշ էր նախորդ մարդահամարների համեմատ: Մայրաքաղաքի հայության միայն 35,2%-ի կամ 9.008 հայերի համար էր հայերենը մայրենի լեզու: Լենինգրադ քաղաքի հայության թվաքանակը կազմում էր 6.628 մարդ, իսկ հայերենը մայրենի լեզու էր քաղաքի հայերի 34,5%-ի համար: Ակնհայտ է, որ Մոսկվայի և Լենինգրադի հայության շրջանում մայրենի լեզուն աստիճանաբար մղվում էր երկրորդ պլան և հայերենը մայրենի լեզու էր ընդամենը 34–35%-ի համար: Մոսկվայի մարզի հայության շրջանում մայրենի լեզուն հայերենը նշողների ցուցանիշը մի փոքր բարձր էր՝ 40,4%:

Հետաքրքրական է, որ 1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ռուսերենը մայրենի լեզու էր Մոսկվա քաղաքի հրեա բնակչության 91,3%-ի, թաթար բնակչության 22,3%-ի և հայ բնակչության 65,8%-ի համար:

1970 թ. մարդահամարի տվյալներով՝ Մոսկվա քաղաքում բնակվող մեծաթիվ ազգային խմբերի շրջանում (հրեաներ, ուկրաինուցիներ, թաթարներ, հայեր և այլն), ռուսերենը որպես

---

[8] Տե՛ս Белозеров В., Этническая карта Северного Кавказа, Москва, 2005, էջ 115:

մայրենի կամ երկրորդ լեզու ազատ տիրապետողների կշիռը կազմում էր ավելի քան 95%, ընդ որում՝ այդ ցուցանիշով հայերը գերազանցում էին նույնիսկ մոսկվայաբնակ ուկրաինացիներին (համապատասխանաբար 97,3% և 96,9%)[9]: Այս գործընթացի ակտիվացման պատճառներն էին հայկական կրթական հաստատությունների բացակայությունը, ռուսիֆիկացման գործընթացի բարձր աստիճանը և խառնամուսնությունները:

Իրավիճակը նկատելիորեն այլ էր Հյուսիսային Կովկասի և Դոնի հայության շրջանում, ուր, նախևառաջ, տեղաբնակ հայությանը հասու էր հայալեզու միջնակարգ կրթությունը, ապա նաև հիշյալ տարածաշրջաններում էր կենտրոնացած ՌՍԴԽՀ գյուղաբնակ հայության գերակշիռ մասը: Այսպես՝ հայերենը մայրենի լեզու էր Կրասնոդարի երկրամասի և Հյուսիս-Օսական ԻԽՍՀ հայության ավելի քան 77%-ի, Ստավրոպոլի երկրամասի հայության 68%-ի, Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ հայության 69%-ի, Ռոստովի մարզի հայության շուրջ 70%-ի համար:

Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը նախորդ մարդահամարի համեմատ 1970 թ. արձանագրել էր թվաքանակի ավելի քան 19% աճ՝ կազմելով 33.439 մարդ, որից Ղրիմում բնակվում էր հանրապետության հայության 9,24%-ը[10]: Ուկրաինական ԽՍՀ ստվար հայ բնակչություն ունեցող մարզերն էին Դոնեցկը (6.029 հայ) և Խարկովը (4.832 հայ): Ուկրաինական ԽՍՀ հայության 58,5%-ի համար մայրենի լեզու էր հանդիսանում ռուսերենը, 38,4%-ի համար՝ հայերենը և ընդամենը 2,5%-ի համար՝ ուկրաիներենը: Ուկրաինական ԽՍՀ մայրաքաղաք Կիևում բնակվում էր 2.976 հայեր:

---

[9] Տե՛ս Выдро М. Я., Население Москвы (По материалам переписей населения 1871-1970 гг.), Москва, 1976, էջ 32:

[10] Տե՛ս Беднарский И. Г., Атлас «Крым. Армяне», Армянское население Крыма с древних времен до наших дней, Симферополь, 2008, էջ 36:

Բելոռուսական ԽՍՀ հայությունը 1970 թ. կազմում էր 2.362 մարդ, որից գյուղաբնակներ էին ընդամենը 363-ը: Հանրապետության հայ բնակչության 2/3-ից ավելին արական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ հայերենը մայրենի լեզու էր հայության շուրջ 45%-ի համար: Մոգիլյովի մարզում բնակվում էր 288, Վիտեբսկի մարզում՝ 335, Բրեստի մարզում՝ 266, Գրոդնոյի մարզում՝ 193 և Գոմելի մարզում՝ 316 հայ: Մինսկի մարզում բնակվում էին 277, իսկ մայրաքաղաք Մինսկում՝ 687 հայ[11]:

1970 թ. մարդահամարի համաձայն՝ հայ ազգաբնակչության թվաքանակի նկատելի աճ էին արձանագրել միջինասիական բոլոր հանրապետությունները, ուր, միասին վերցրած, բնակվում էր 76.517 հայ: Ստվար հայ բնակչություն ունեին Ուզբեկական ԽՍՀ-ն, Թուրքմենական ԽՍՀ-ն և Ղազախական ԽՍՀ-ն:

Հետաքրքրական է, որ միջինասիական հանրապետությունների հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ էին: Ուզբեկական ԽՍՀ 34.174 հայ բնակիչների 94,5%-ը քաղաքաբնակ էր, ընդ որում՝ Տաշքենդում բնակվում էր ավելի քան 13.000 հայ: Քաղաքաբնակ էր Թուրքմենական ԽՍՀ հայ ազգաբնակչության 97,4%-ը, իսկ մայրաքաղաք Աշխաբադում բնակվում էր 11.722 հայ կամ թուրքմենահայության կեսից ավելին: Գյուղաբնակ հայության համամեմատաբար նկատելի ցուցանիշ ունեին Ղազախական ԽՍՀ-ն (հայության 24,5%) և Կիրգիզական ԽՍՀ-ն՝ 52%: Հայերենը մայրենի լեզու էր Ուզբեկական ԽՍՀ հայության 63%-ի, Թուրքմենական ԽՍՀ հայության 70%-ի, Ղազախական ԽՍՀ հայության 59%-ի համար:

Ուզբեկական ԽՍՀ հայության համախումբ բնակեցման մարզերն էին՝ Սամարղանդը (9.280 մարդ), Ֆերգանան (3.307

---

[11] Տե՛ս http://babylon.iatp.by/nationalRegistry/1/nr1.html

մարդ), Անդիժանը (2.254 մարդ): Թուրքմենական ԽՍՀ հայությունը, մայրաքաղաք Աշխաբադից բացի, համախումբ բնակվում էր Մառիի և Չարջոուի մարզերում, իսկ Ղազախական ԽՍՀ-ում ստվար հայ բնակչությունն ունեին Գուրևի մարզը (1.833 մարդ) և Ալմա-Աթա քաղաքը (1.516 մարդ): Կիրգիզական ԽՍՀ հայության թվաքանակը կազմում էր 2.688 մարդ, Տաջիկական ԽՍՀ հայությանը՝ 3.787:

1970 թ. Անդրկովկասի երկու հանրապետություններում՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում և Վրացական ԽՍՀ-ում միասին, բնակվում էր 935.829 հայ: Ադրբեջանական ԽՍՀ մայրաքաղաք Բաքվում (քաղխորհրդին ենթակա բնակավայրերով հանդերձ) բնակվում էր 207.464 հայ կամ ադրբեջանահայության 42,9%-ը: ԼՂԻՄ-ում էր բնակվում Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ հայության ուղիղ 25%-ը կամ 121.068 մարդ, իսկ Նախիջևանի ԻԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը շարունակում էր նվազել՝ կազմելով ընդամենը 5.828 մարդ:

Հայերենը մայրենի լեզու էր Ադրբեջանական ԽՍՀ հայության շուրջ 83,5% համար, ռուսերենը՝ 16,4%-ի: Հայության շրջանում գերակշռում էր իգական սեռը:

Վրացական ԽՍՀ հայության շուրջ 1/3-ը կամ 150.205 մարդ բնակվում էր Թբիլիսիում: Աբխազական ԻԽՍՀ-ում էր բնակվում Վրացական ԽՍՀ հայության 16,5%-ը, Աջարական ԻԽՍՀ-ում՝ 3,4%-ը: Հետաքրքրական է, որ վրացահայության 7,1%-ի համար մայրենի էր վրացերենը, 8%-ի համար՝ ռուսերենը, ինչն էլ վիրահայ համայնքի մի հատվածի հայկական արմատներից հեռանալու և աստիճանական ձուլման ցուցիչ էր:

Զավախահայության շրջանում հայերենի, որպես մայրենի լեզվի տիրապետում էր ճնշող մեծամասնությունը:

1970 թ. համամիութենական մարդահամարը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել ոչ

միայն Հայկական ԽՍՀ հայ ազգաբնակչության, այլ նաև միութենական մյուս հանրապետությունների հայության թվաքանակի ու տեղաբաշխման, լեզվական պատկանելիության մասին: Հարկ է նկատել, որ 1970 թ. մարդահամարն արձանագրել է հետաքրքիր տվյալներ նաև հայության սեռատարիքային կազմի, կրթության, երկու սեռերի ամուսնացած հայազգի քաղաքացիների վերաբերյալ: Այս վիճակագրական տվյալների մի զգալի մասը ներկայացնում են նաև միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչությունը:

Հավելված

աղյուսակ N 1

ՈՍՂԽՀ որոշ ինքնավարությունների, երկրամասերի և քաղաքների հայություն թիվը, մայրենի, ռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

ՈՍՂԽՀ առանձին երկրամասեր	Ամբողջը	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ		
		հայ.	ռուս.	այլ	հայ.	ռուս.	այլ
ԽՍՀՄ	3.559.151	3.254.132	268.824	36.195	80.328	1.071.758	132.657
Կրասնոդար	98.589	76.207	22.263	119	7.910	64.295	405
Ադիղեական ԻՄ	5.217	4.088	1.119	10	370	3.617	42
Ստավրոպոլ	31.096	21.188	9.878	30	3.343	18.800	214
Աստրախան	1.784	861	912	11	228	819	22

Ք. Լենինգրադ /քաղ-խորհրդին ենթ. բնակավայրերով/	6.628	2.290	4.286	52	1.366	2.172	172
Ք. Մոսկվա /քաղ-խորհրդին ենթ. բնակավայրերով/	25.584	9.008	16.448	128	5.595	8.453	741
Մոսկվայի մարզ	5.683	2.296	3.360	27	1.100	2.110	184
Ռոստով	53.620	37.383	16.220	17	5.287	31.471	164
Դաղստանի ԻԽՍՀ	6.615	5.041	1.563	11	276	4.530	95
Կաբարդինա-Բալկարական ԻԽՍՀ	2.033	1.384	647	22	120	1.241	40
Հյուսիս-Օսական ԻԽՍՀ	13.355	10.345	2.925	85	573	9.582	138
Չեչենա-Ինգուշ. ԻԽՍՀ	14.543	10.081	4.437	25	1.017	8.896	107

աղյուսակ N 2

Ուկրաինական ԽՍՀ որոշ մարզերի հայություն թվաքանակը, հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	ուկր.	այլ	հայ.	ռուս.	ուկր.	այլ
Ուկրաինական ԽՍՀ, որից՝	33.439	12.853	19.587	855	144	5.257	11.805	3.722	605

Կիև	2.976	1068	1.853	40	15	569	997	482	58
Դոնեցկ	6.029	2.137	3.827	44	21	1.086	1.960	578	98
Ղրիմ	3.091	1.372	1.706	2	11	436	1.217	46	67
Օդեսա	3.588	1.215	2.310	46	17	613	1.111	307	60
Խարկով	4.832	1.653	3.111	56	12	954	1.522	562	58

աղյուսակ N 3

Բելոռուսական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, բելոռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազա.տիրապետողներ			
		հայ.	ռուս	բելո	այլ	հայ.	ռուս	բելո	այլ
Բելոռուսական ԽՍՀ, որից	2.362	1.055	1.224	74	9	319	962	103	83
քաղաքաբնակ	1.999	857	1.998	37	7	289	788	87	75
գյուղաբնակ	363	198	126	37	2	30	174	16	7
արական	1.615	871	698	40	6	223	794	42	55
իգական	747	184	526	34	3	96	168	61	27

Ուզբեկական ԽՍՀ որոշ մարզերի հայություն թվաքանակը. հայերեն, ռուսերեն, ուզբեկերեն և այլ լեզուների տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	ուզբ.	այլ	հայ.	ռուս.	ուզբ.	այլ
Ուզբեկական ԽՍՀ, որից	34.174	21.585	12.517	35	37	2.672	17.797	1.210	334
քաղաքաբնակ	32.309	20.083	12.171	25	30	2.642	16.832	1.058	307
գյուղաբնակ	1.865	1.502	346	10	7	30	965	152	27
ք. Տաշքենդ	13.364	6.748	6.593	10	13	1.510	5.788	414	95
Տաշքենդի մարզ	1.621	997	617	2	5	113	826	60	19
Անդիժան	2.254	1714	536	4	-	92	1.409	129	5
Սամարղանդ	9.280	6.600	2.661	9	10	626	5.430	242	97
Սիրդարյա	1.206	996	208	1	1	31	753	37	16
Ֆերգանա	3.307	2.296	1.009	1	1	176	1.844	145	24

Ղազախական ԽՍՀ հայություն թվաքանակը, հայերեն, ռուսերեն, ղազախերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	Ղազախ	այլ	հայ.	ռուս.	ղազախ	այլ
Ղազախական ԽՍՀ, որից	12.814	7.604	4.752	5	453	800	6.899	82	298
քաղաքաբնակ	9.677	5.837	3.782	2	56	694	5.227	51	254
գյուղաբնակ	3.137	1.767	970	3	397	106	1.672	31	44
արական	8.357	5.523	2.614	2	218	521	5.072	46	218
իգական	4.457	2.081	2.138	3	235	279	1.827	36	80
Ալմա-Աթա	1.516	818	688	-	10	126	716	12	37
Գուրևի մարզ	1.833	1.165	657	-	11	145	1.041	15	77

Վրացական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազա. տիրապետողներ			
		հայ.	ռուս	վրաց.	այլ	հայ.	ռուս	վրաց.	այլ
Վրացական ԽՍՀ, որից	452.309	383.349	36.410	32.246	304	7.903	160.435	51.477	2.656
քաղաքաբնակ	255.115	194.200	35.019	25.656	240	7.050	109.778	45.371	1.075
գյուղաբնակ	197.194	189.149	1.391	6.590	64	853	50.657	6.106	1.581
արական	217.874	184.866	17.112	15.753	143	3.797	87.970	24.885	1.448
իգական	234.435	198.483	19.298	16.493	161	4.106	72.465	26.592	1.208
Թբիլիսի	150.205	108.867	25.941	15.224	173	4.609	59.169	36.928	482
Հանրապետական ենթ. շրջաններ	210.383	188.642	5.752	15.894	95	2.064	46.022	12.797	2.037
Աբխազական ԻԽՍՀ	74.850	72.151	2.577	108	14	757	45.659	420	71
Աջարական ԻԽՍՀ	15.614	13.405	2.053	153	3	456	8.997	1.211	22
Հարավ-Օսական ԻՄ	1.254	283	86	866	19	17	588	121	44

աղյուսակ N 7

Կիրգիզական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, կիրգիզերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների.

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	կիրգ.	այլ	հայ.	ռուս.	կիրգ.	այլ
Կիրգիզական ԽՍՀ, որից՝	2.688	1.806	676	4	202	113	925	220	350
քաղաքաբնակ	1.288	660	598	1	29	106	594	10	50
գյուղաբնակ	1.400	1.146	78	3	173	7	331	210	300
արական	1.495	1.022	360	2	111	73	627	108	159
իգական	1.193	784	316	2	91	40	298	112	191

աղյուսակ N 8

Տաջիկական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, տաջիկերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս	տաջ.	այլ	հայ.	ռուս.	տաջ.	այլ
Տաջիկական ԽՍՀ, որից՝	3.787	2.415	1.364	1	7	202	1.906	92	94

քաղաքաբնակ	3.422	2.095	1.322	1	4	196	1.794	79	73
գյուղաբնակ	365	320	42	-	3	6	112	13	21
արական	2.066	1.325	738	-	3	129	1.086	49	54
իգական	1.721	1.090	626	1	4	73	820	43	40

աղյուսակ N 9

Թուրքմենական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, թուրքմեներեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	թուրք.	այլ	հայ.	ռուս.	թուրք.	այլ
Թուրքմենական ԽՍՀ, որից	23.054	16.191	6.850	6	7	1.621	13.383	357	184
քաղաքաբնակ	22.463	15.692	6.758	6	7	1.598	13.145	350	179
գյուղաբնակ	591	499	92	-	-	23	238	7	5
արական	11.450	8.013	3.429	4	4	817	6.744	217	98
իգական	11.604	8.178	3.421	2	3	804	6.639	140	86
Աշխաբադ	11.722	8.153	3.566	1	2	869	6.971	146	73

Հանրապետ. ենթ. շրջաններ	4.865	3.518	1.342	3	2	240	2.883	41	65
Մառի մարզ	4.903	3.539	1.360	2	2	379	2.813	115	23
Չարջոուի մարզ	1.307	792	514	-	1	121	600	42	13

աղյուսակ N 10

Ադրբեջանական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Ամբողջը	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	ադրբ.	այլ	հայ.	ռուս.	ադրբ.	այլ
Ադրբեջան. ԽՍՀ, որից	483.520	403.610	79.123	700	87	26.814	168.545	43.549	467
քաղաքաբնակ	344.577	265.203	78.698	610	66	26.571	153.500	33.385	392
գյուղաբնակ	138.943	138.407	425	90	21	243	15.045	10.164	75
արական	231.222	193.287	37.712	185	38	12.699	87.114	23.847	227
իգական	252.298	210.323	41.411	515	49	14.115	81.431	19.702	240

ք. Բաքու /քաղխորհրդին ենթ. բնակավայրերով/	207.464	141.131	65.966	334	33	21.615	98.885	16.325	239
Հանրապետական ենթ. շրջաններ	149.160	137.797	10.965	349	49	3.560	48.017	21.776	193
Նախիջևանի ԻԽՍՀ	5.828	5.738	77	11	2	30	800	1.306	6
Լեռ. Ղարաբաղի ԻՄ	121.068	118.944	2.115	6	3	1.609	20.843	4.142	29

աղյուսակ N 11

Մոլդովական ԽՍՀ հայության թվաքանակը, հայերեն, ռուսերեն, մոլդովերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

	Անխտրաբար	Մայրենի լեզու				Որպես երկրորդ լեզու ազ. տիրապետողներ			
		հայ.	ռուս.	մոլդ.	այլ	հայ.	ռուս.	մոլդ.	այլ
Մոլդովական ԽՍՀ, որից	1.336	481	803	39	13	124	490	148	48
քաղաքաբնակ	1.154	381	732	34	7	113	394	136	38
գյուղաբնակ	182	100	71	5	6	11	96	12	10
արական	794	350	412	23	9	79	351	69	23
իգական	542	131	391	16	4	45	139	79	25

ԽՍՀՄ հայության լեզվական պատկանելիությունը և տարիքային կազմն ըստ 1970 թ. համամիութենական մարդահամարի արդյունքների[12]

	Անքողջը	Մայրենի լեզու			Որպես երկրորդ լեզու ազ. տիրապետողներ		
		ազգ. լեզու	ոչ իր ազգ. լեզու		ազգ. լեզու	ոչ իր ազգ. լեզու	
		հայերեն	ռուս.	այլ	հայերեն	ռուս.	այլ
Հայեր, այդ թվում՝	3.559.151	3.254.132	268.824	36.195	80.328	1.071.758	132.657
0–10 տարեկան	895.936	839.392	50.375	6.169	8.928	67.362	6.946
11–15	418.308	385.149	29.960	3.199	8.977	81.273	8.736
16–19	251.545	232.296	17.360	1.889	5.636	94.226	7.012
20–29	383.917	356.610	23.644	3.663	8.396	192.966	13.607

[12] Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, եշվ. աշխ., էջ 360–364: Հարկ է նշել, որ 1970 թ. համամիութենական մարդահամարը վերոհիշյալ արդյունքները հաշվառել է տվյալ ազգային հանրապետության (այս դեպքում Հայկական ԽՍՀ) և ԽՍՀՄ այն տարածաշրջանների բնակչության թվական տվյալների ամփոփումով, ուր ազգային խումբը (տվյալ դեպքում հայերը, վրացիները, ղազախները, ուզբեկները, ադրբեջանցիները, էստոնացիները և այլք) հիմնականում տեղաբաշխված է: Ընդհանուր առմամբ հայերին և մյուսներին վերաբերող տվյալները ներառում են այդ ազգությունների ներկայացուցիչների թվի 93–99%-ը, իսկ տվյալ էթնիկ խմբի, բնակչության մնացյալ թվաքանակը ներկայացվել է «ըստ տարիքային խմբի չբաշխվածներ» տողով:

| | | |

աղյուսակ N 14

Ամուսնացած հայ տղամարդկանց և կանանց թվաքանակը Վրացական ԽՍՀ-ում, Ադրբեջանական ԽՍՀ-ում, Թուրքմենական ԽՍՀ-ում, Հայկական ԽՍՀ-ում 1959 թ. և 1970 թ.

| Տվյալ սեռի և տարիքի 1000 մարդուց ամուսնացած | | |

ԽՍՀՄ հայ բնակչության կրթության աստիճանը 1959 թ. և 1970 թ.

10 տարեկան և ավելի 1000 մարդուց կրթություն ունեցող								
ԽՍՀՄ	Տարին	Բարձրագույն	Թերիրձ.	Միջին մասն.	Ընդհ. միջն.	Թերի միջն.	Ընդամենը միջ. և բարձրագույն /հաշ թերի/	Տարրական
Ամբողջը, որից՝	1959	38	14	38	120	233	443	252
	1970	55	20	50	185	208	518	271
քաղաքաբնակ	1959	58	21	47	156	238	520	238
	1970	76	27	59	224	205	591	242
գյուղաբնակ	1959	13	6	27	72	226	344	270
	1970	16	6	31	112	212	377	325

ОВАНЕС АЛЕКСАНЯН
кандидат исторических наук

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ СОЮЗНЫХ РЕСПУБЛИК ПО ДАННЫМ ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ СССР 1970 ГОДА

РЕЗЮМЕ

После Великой Отечественной войны армянское население проживало во всех союзных республиках СССР, армяне занимали прочные позиции в политико-экономической, культурной и в других сферах.

Послевоенную динамику роста численности армянского населения, ареал его распределения, соотношение городского и сельского населения, языковой принадлежности, грамотности, возрастные группы и число мужчин и женщин, состоящих в браке прослеживается с помощью проведенных переписей населения СССР в 1959 и 1970 годах. Кроме Армянской ССР, где в 1970 г. проживало 62% армянского населения СССР, армяне в большом количестве и компактно проживали в Грузинской ССР (452.309 человек), Азербайджанской ССР (483.520 человек), РСФСР (298.718 человек), Узбекской ССР (34.174 человек), Украинской ССР (33.439 человек), Туркменской ССР (23.054 человек) и Казахской ССР (12.814 человек).

По данным Всесоюзной переписи населения 1970 г. в Армянской ССР проживало 2.208.327 армян. Армянское население проживало во всех столичных городах – Баку (207.464 человек), Тбилиси (150.205 человек), Москва (25.584 человек), Ташкент (13.364 человек), Ашхабад (11.722 человек), Киев (2.976 человек), Алма-Ата (1.516 человек) и т.д.

HOVHANNES ALEKSANYAN
PhD in History

THE ARMENIAN POPULATION OF THE SOVIET REPUBLICS ACCORDING TO THE 1970 CENSUS DATA

SUMMARY

The Armenian population of USSR continued living in all the Soviet republics after the Great Patriotic War (World War II), holding strong positions in the political, economic, cultural and some other spheres.

The dynamics of the postwar growth of Armenian population in the USSR, the area of their distribution, the ratio of urban to rural populations; the ethnic language affiliation and literacy of Armenian population; the age group and percentage of married men and women can be traced through the reports of the Soviet population censuses in 1959 and 1970. The data, compiled from the said censuses, certify that, except for the Armenian SSR, where 62% of Armenian population of the USSR was living as of 1970, a large numbers of Armenians were residing compactly in the Georgian SSR (452.309 people), the Azerbaijani SSR (483. 520 people), the RSFSR (298.718 people), the Uzbek SSR (34.174 people), the Ukrainian SSR (33.439 people), the Turkmen SSR (23.054 people) and the Kazakh SSR (12.814 people). According to the 1970 census data in the Armenian SSR were living 2.208.327 Armenians. The Armenian population lived in all capitals of Soviet republics- In Baku (207.464 people), in Tbilisi (150.205 people), in Moscow (25.584 people), in Tashkent (13.364 people), in Ashkhabad (11.722 people), in Kiev (2.976 people), in Alma-Ata (1.516 people), etc.